



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«23» հունիսի 2020թ.

N 8

ԻՐԱԶԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Ճշգրտող հարկային հաշիվների դուրսգրման վերաբերյալ

Հարց

Ապրանքները գնորդներին մատակարարելուց հետո, գործարքից մի քանի ամիս անց գնորդը մատակարարված ապրանքների մի մասը ցանկանում է հետ վերադարձնել: Ճշգրտող հարկային հաշիվ դուրս գրելիս մատակարարման ամսաթիվը պետք է գրել հետ վերադարձի օրը, թե՛ գնորդին ապրանքի մատակարարման օրը, ինչպես նաև ճշգրտող հաշիվ դուրս գրելիս մատակարարի և գնորդի հասցեները արդյո՞ք զուգահեռ պետք է տեղափոխվեն:

Պատասխան

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 42-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են այն դեպքերը, երբ օրենսգրքի կիրառության նպատակով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքը կարող է ճշգրտվել,

- 42-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքի ճշգրտման՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերն առկա չեն, սակայն ապրանք

մատակարարողը, աշխատանք կատարողը և (կամ) ծառայություն մատուցողը կատարել է գործարքի ճշգրտում (դուրս է գրել ճշգրտող հաշվարկային փաստաթուղթ), ապա գործարքի ճշգրտումը հաշվի չի առնվում,

- 55-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված են հարկային հաշվում կամ ճշգրտող հարկային հաշվում, հաշիվ վավերագրում կամ ճշգրտող հաշիվ վավերագրում պարտադիր ներառման ենթակա տվյալները:

Միաժամանակ ճշգրտող հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 05.10.2017թ. N1257-Ն որոշման N1 հավելվածի 5-րդ բաժնով:

Հաշվի առնելով վերոգրյալը նկարագրված դեպքում, եթե առկա են օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գործարքի ճշգրտման հիմքերը, ապա մատակարար կազմակերպությունը դուրս է գրում ճշգրտող հարկային հաշիվ կամ ճշգրտող հաշիվ-վավերագիր, որում արտացոլվում են վերադարձվող ապրանքի քանակը, անվանացանկը, ինչպես նաև այդ ցուցանիշների նկատմամբ նախկինում դուրս գրված հարկային հաշվում կամ հաշիվ-վավերագրում նշված տվյալները (միավորի գինը, արժեքը, ԱԱՀ-ի գումարը, ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների դեպքում՝ ակցիզային հարկի գումարը) և հարկային հաշվում կամ հաշիվ-վավերագրում պարտադիր լրացման ենթակա այլ տվյալներ: Ընդ որում, ճշգրտող հարկային հաշիվը կամ ճշգրտող հաշիվ-վավերագիրը դուրս է գրվում ճշգրտման համապատասխան հիմքի առաջացման օրը, և ապրանքների մատակարարման ամսաթիվ նշվում է գնորդ կազմակերպության կողմից ապրանքների հետ վերադարձման օրը, իսկ ապրանքների առաքման և նշանակման վայրերը նշվում են համապատասխանաբար՝ գնորդ կազմակերպության հասցեն (որտեղից մատակարարվում են ապրանքները) և մատակարար կազմակերպության հասցեն (որտեղ ապրանքները հանձնվում են):

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ